«Ֆրեյզեր» և «Կատո» ինստիտուտների «Տնտեսական ազատությունը աշխարհում. 2010 թ. ինդեքս»

2010 թ. սեպտեմբերի 20-ին ամերիկյան «Կատո» և կանադական «Ֆրեյզեր» ինստիտուտները համատեղ հրապարակել են **«Տնտեսական ազատությունը աշխարհում. 2010 թ.»** տարեկան զեկույցը, որում արդեն հինգերորդ տարին է (սկսած 2006 թ.) աշխարհի բազմաթիվ երկրների թվում հրապարակվում են Հայաստանի ու Ադրբեջանի տնտեսական ազատության ինդեքսները: Վրաստանի գնահատականը հրապարակվում է 2005 թ.-ից:

Գնահատման մեթոդաբանությունը[1]. **«Տնտեսական ազատությունը աշխարհում. 2010»** զեկույցում տնտեսական ազատության ինդեքսը գնահատվել է աշխարհի 141 երկրների համար: Գնահատման ժամանակ կիրառվել է 0-ից մինչև 10 գնահատման համակարգ, ընդ որում՝ 10-ը՝ ամենաազատ երկրի գնահատականն է, իսկ 0-ին մոտը՝ ամենասահմանափակ երկրինը: Օգտագործվել են 42 անկախ տնտեսական ենթագործոններ, որոնք խմբավորվել են 5 խոշոր գործոնների մեջ: Այդ խոշոր գործոններն են՝ ա) կառավարության չափը, այսինքն՝ պետական ապարատի չափերը և դրա գործառույթների ընդգրկունությունը, բ) իրավական կառուցվածքը և սեփականության իրավունքի

---

[1] *«Ֆրեյզեր» և «Կատո» ինստիտուտների հրապարակած **«Տնտեսական ազատությունը աշխարհում ինդեքսի»** առանձին ենթագործոնների գնահատման մեթոդաբանության մանրամասները ներկայացված են «Հայաստանի տնտեսությունը միջազգային գնահատումներում» գրքում:*

պաշտպանվածությունը, գ) «առողջ» փողի մատչելիությունը, դ) միջազգային առևտրի ազատությունը, ե) վարկային շուկա-յի, աշխատուժի շուկայի և գործարարության կարգավորումը: Այս հինգ խոշոր գործոններից յուրաքանչյուրը ստացել է առանձին գնահատական, իսկ ինդեքսի համախառն գնահատականը ստանալու համար վերցվել է դրանց թվաբանական միջինը:

2010թ. զեկույցում տնտեսական ազատության ինդեքսը հաշվարկելիս հեղինակները օգտվել են 2008թ. տնտեսական զարգացման վերաբերյալ միջազգային ֆինանսական կառույցների (Համաշխարհային բանկ, Արժույթի միջազգային հիմնադրամ և այլն) հրապարակած վիճակագրական տվյալներից, քանի որ դրանք համարվել են առավել ամբողջական[2]:

<u>Հայաստանի գնահատականները</u>. Ըստ «Ֆրեյզեր» և «Կատո» ինստիտուտների գնահատման՝ Հայաստանը նախկին ԽՍՀՄ և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրների թվում տնտեսապես առավել ազատ երկրներից մեկն է և աշխարհի 141 երկրների շարքում գրավում է 50-րդ տեղը:

Նկատենք, որ 2009 թ. համեմատ Հայաստանի տնտեսական ազատության ինդեքսի ընդհանուր գնահատականը, հետևաբար նաև դիրքը աշխարհի 141 երկրների շարքում մի փոքր վատացել է. 2010թ. զեկույցում Հայաստանի գնահատականը կազմել է «7.12»՝ նախորդ տարվա «7.17»-ի փոխարեն:

---

[2] *http://www.freetheworld.com/2010/reports/world/EFW2010_app.pdf:*

Հայաստանի գնահատականի վատացումը պայմանավորված է 2008թ.-ին ՀՆԱ-ում կառավարության տրանսֆերտների ու լրահատկացումների, ինչպես նաև սպառման աճով, ընդ որում՝ Կառավարության տրանսֆերտներն ու լրահատկացումները 2008թ.-ին կազմել են ՀՆԱ-ի 8.44%-ը՝ նախորդ տարվա 4.3%-ի համեմատ, իսկ Կառավարության սպառումը 2008թ.-ին կազմել է ՀՆԱ-ի 14.04%-ը՝ նախորդ տարվա 13.0%-ի համեմատ: Հայաստանի տնտեսական ազատության ինդեքսի վատացումը պայմանավորված է եղել նաև 2008թ.-ին գրանցված գնաճի բարձր՝ 9.0% մակարդակով և դրա բարձր տատանողականությամբ, միջազգային առևտրի հատվածի կանխատեսելի չափի համեմատ փաստացի չափի ցածր մակարդակով և միջազգային առևտրի բարձր հարկմամբ, մասնավոր սեփականության ապաշտպանվածության ցածր աստիճանով, օտարերկրյա բաժնեմասերի/ներդրումների ցածր մատչելիությամբ և այլն (տե՛ս աղյուսակ 1):

Վերոնշյալ ենթագործոնների վատացման պատճառով Հայաստանի տնտեսական ազատության ինդեքսը կարող էր ավելի ցածր լինել, եթե դրա բարելավմանը չնպաստեին ներմուծման և արտահանման իրականացման ծախսի կրճատումը, առևտրի կարգավորիչ սահմանափակումների մեղմացումը, եկամտահարկի առավելագույն սահմանային դրույքի նվազումը և փողի առաջարկի աճի ցածր տեմպը:

<u>Հայաստանը տարածաշրջանային համապատկերում</u>. Նախկին ԽՍՀՄ երկրներից գնահատվել են 11, իսկ

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներից՝ 13 երկրների ինդեքսները (տե՛ս աղյուսակ 2): Նշված երկրների ինդեքսների վերլուծությունից հետևում է, որ նախկին ԽՍՀՄ երկրների թվում Հայաստանը տնտեսական ազատության ամփոփ ինդեքսի վարկանիշով զիջում է էստոնիային, Լիտվային և Վրաստանին, իսկ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների թվում՝ Սլովակիային, Հունգարիային, Բուլղարիային, Չեխիային և Ալբանիային: Վրաստանը զբաղեցնում է 23-րդ, իսկ Ադրբեջանը՝ 93-րդ տեղը: Հարավային Կովկասի երկրների 2005-2008թթ. տվյալներով հաշվարկված 42 ենթագործոնների 2007-2010թթ. զեկույցներում տրված գնահատականների համեմատական վերլուծությունը մանրամասն ներկայացված է աղյուսակ 1-ում:

Տնտեսության առանձին ոլորտների գծով հաշվարկված ենթաինդեքսներով Հայաստանը զիջում է ավելի շատ երկրների: Բացառություն են կազմում միայն ***կառավարության չափը*** և ***առողջ փողի մատչելիությունը*** ենթաինդեքսները, որոնցով Հայաստանը գրավում է համապատասխանաբար 18-րդ և 45-րդ տեղերը աշխարհի 141 երկրների շարքում (տե՛ս աղյուսակներ 3 և 4):

«Տնտեսական ազատությունն աշխարհում. 2010թ.» զեկույցում տնտեսապես ազատ երկրների առաջին տասնյակում են Հոնգկոնգը, Սինգապուրը, Նոր Զելանդիան, Շվեյցարիան, Չիլին, ԱՄՆ-ը, Կանադան, Ավստրալիան, Մավրիտանիան և Մեծ Բրիտանիան, իսկ վերջին

տասնյակում՝ Ալժիրը, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը, Բուրունդին, Գվինեա-Բիսաուն, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությունը, Կոնգոյի Հանրապետությունը, Վենեսուելան, Անգոլան, Մյանմարը և Զիմբաբվեն: Հետաքրքրական է այն փաստը, որը ներկայումս Համաշխարհային տնտեսական համաժողովի «Համաշխարհային մրցունակության» ինդեքսով Մավրիտանիան աշխարհի երկրների վերջին տասնյակում է, իսկ Կատո և Ֆրեյզեր ինստիտուտների «Տնտեսական ազատության» ինդեքսով՝ առաջին տասնյակում: Բացի այդ, տարեցտարի վատանում է տնտեսական ազատությունը ԱՄՆ-ում. եթե 2000թ.-ին իր գնահատականով ԱՄՆ-ը աշխարհում զբաղեցնում էր 3-րդ տեղը, ապա 2010թ.-ին՝ 6-րդ տեղում է:

Հարավկովկասյան երկրների «Տնտեսական ազատությունը աշխարհում. 2010 թ. ինդեքսի» համեմատությունը ըստ «Ֆրեյզեր» և «Կատո» ինստիտուտների գնահատականների[3]

Աղյուսակ 1

		Հայաստան				Վրաստան				Ադրբեջան			
		2005	2006	2007	2008	2005	2006	2007	2008	2005	2006	2007	2008
	Ցուցանիշները												
1.	**Կառավարության չափը**	**8.33**	**8.35**	**8.10**	**7.87**	**5.69**	**7.42**	**7.00**	**7.68**	**6.03**	**6.00**	**5.04**	**5.76**
ա	Կառավարության սպառումը	8.16	7.76	7.94	7.64	5.72	6.97	4.81	7.53	6.00	5.91	4.06	4.65
բ	Տրանսֆերտներ և լրահատկացումներ	8.33	8.79	8.96	7.84	8.05	7.73	8.18	8.18	7.09	7.09	7.09	9.37
գ	Պետական ձեռնարկությունները և ներդրումներ			7.00	7.00	0.00	6.00	6.00	6.00	--	--	4.00	4.00
դ	Առավելագույն սահմանային հարկային դրույքը, այդ թվում՝	8.50	8.50	8.50	9.00	9.00	9.00	9.00	9.00	5.00	5.00	5.00	5.00
	Եկամտահարկի առավելագույն սահմանային դրույքը	9.00	9.0	9.00	10.00	10.00	10.00	10.00	9.00	7.00	7.00	7.00	7.00
	Եկամտահարկի և սոցապ վճարների հարկման առավելագույն սահմանային դրույքը	8.00	8.00	8.00	8.00	8.00	8.00	8.00	9.00	3.00	3.00	3.00	3.00
2.	**Իրավական կառուցվածքը և սեփականության իրավունքի պաշտպանվածությունը**	**5.59**	**5.56**	**5.61**	**5.49**	**4.81**	**4.95**	**5.26**	**5.07**	**5.67**	**5.67**	**6.23**	**6.40**
ա	Դատական համակարգի անկախությունը	2.11	2.18	2.13	2.10	1.88	2.54	2.99	2.79	2.98	2.81	4.06	4.79
բ	Անաչառ դատարաններ	2.97	3.12	3.35	3.13	2.38	2.70	3.29	3.42	3.40	3.68	4.41	4.88
գ	Մասնավոր սեփականության պաշտպանվածությունը	5.53	5.81	6.00	5.37	4.23	3.86	4.36	4.08	4.39	4.57	5.39	5.36
դ	Քրեվորական միջամտությունը	5.83	5.83	5.83	5.83	4.20	4.20	4.50	3.70	6.67	6.67	6.67	6.67
ե	Իրավական համակարգի ամբողջականությունը	5.00	5.00	5.00	5.00	--	--	--		6.04	5.83	5.83	5.83
զ	Պայմանագրերի հարկադիր կատարումը	7.16	7.16	7.16	7.16	6.50	6.50	6.50	6.50	7.33	7.33	7.55	7.55
է	Անշարժ գույքի վաճառքի գծով կանոնակարգիչ սահմանափակումներ	9.79	9.79	9.83	9.83	9.67	9.87	9.94	9.94	8.85	8.78	9.69	9.73

[3] *Աղբյուրը՝ Economic Freedom of the World: 2010 Annual Report, գլուխ 2, էջ 26, 29, 69, Economic Freedom of the World: 2009 Annual Report, գլուխ 4, էջ 54, 57, 97, Economic Freedom of the World: 2008 Annual Report, գլուխ 3, էջ 46, 49, 89:*

3.	**«Առողջ փողի» մատչելիությունը**	**9.21**	**9.43**	**8.98**	**8.88**	**8.64**	**8.77**	**8.27**	**9.08**	**7.25**	**7.59**	**7.96**	**6.09**
ա	Փողի առաջարկի աճը	7.56	8.91	7.25	8.14	7.01	6.89	5.90	8.66	8.57	9.06	7.20	6.88
բ	Գնաճի տատանողականությունը	9.41	9.40	9.56	9.18	9.19	9.13	9.03	9.64	7.77	7.96	8.00	7.49
գ	Վերջին տարվա գնաճը	9.87	9.42	9.32	8.21	8.35	9.07	8.15	8.00	7.68	8.34	6.66	0.00
դ	Տվյալ երկրում և արտասահմանում արտարժույթով բանկային հաշիվներ ունենալու ազատությունը	10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00	5.00	5.00	10.00	10.00
4.	**Միջազգային առևտրի ազատությունը**	**6.62**	**6.53**	**6.69**	**6.61**	**7.34**	**7.44**	**7.74**	**7.73**	**6.59**	**6.38**	**6.71**	**6.66**
ա	Միջազգային առևտրի հարկումը, այդ թվում՝	7.71	7.69	8.88	8.76	8.51	8.55	8.71	8.88	6.91	6.99	7.28	7.91
	առևտրի հարկումից ստացվող եկամուտները	9.37	9.31	9.13	8.75	9.17	9.29	9.77	9.79	--	--	--	9.19
	միջին մաքսային դրույքը	9.40	9.40	9.42	9.42	8.60	8.60	9.72	9.72	7.92	8.08	8.16	8.18
	մաքսային դրույքների փոփոխականությունը	4.36	4.36	8.10	8.11	7.76	7.76	6.65	7.12	5.89	5.89	6.39	6.36
բ	Առևտրի կարգավորիչ սահմանափակումները	5.16	5.75	5.66	6.42	6.75	7.20	7.81	7.96	3.51	3.40	3.92	4.00
	Առևտրի ոչ մաքսային խոչընդոտները	5.31	5.34	5.17	5.35	5.22	6.12	7.34	7.41	4.38	4.82	5.20	4.81
	Ներմուծման և արտահանման իրականացման ծախսը	5.00	6.15	6.15	7.49	8.28	8.28	8.28	8.51	2.64	2.64	2.64	3.19
գ	Առևտրի հատվածի չափերը	2.64	1.27	1.11	0.29	4.35	4.42	4.28	4.01	7.67	6.95	6.29	5.67
դ	Պաշտոնական փոխարժեքը «սև շուկայի» փոխարժեքի համեմատ	10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00
ե	Միջ. կապիտալի շուկայի սահմանափակումները, այդ թվում՝	7.61	7.94	7.81	7.56	7.07	7.04	7.90	7.82	4.88	4.55	6.04	5.74
	Օտարերկրյա բաժնեմասերի/ներդրումների սահմանափակումը	6.76	6.65	6.45	5.95	5.81	6.40	7.33	7.17	6.68	6.79	7.08	6.48
	Կապիտալի գործարքների սահմանափակումը	8.46	9.23	9.17	9.17	8.33	7.69	8.46	8.46	3.08	2.31	5.00	5.00
5.	**Վարկի, աշխատուժի և գործարարության կարգավորումը**	**6.56**	**6.41**	**6.77**	**6.78**	**7.76**	**7.77**	**7.94**	**7.81**	**5.96**	**5.82**	**6.42**	**6.87**
ա	Վարկային շուկայի կարգավորումը, այդ թվում՝	8.91	8.34	8.95	8.95	9.25	9.25	9.25	8..67	6.63	6.98	6.88	7.50
ա	Բանկերի մասնավոր սեփականությունը	10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00	5.00	5.00	5.00	5.00
	Մրցակցությունը օտարերկրյա բանկերի հետ	7.00	7.00	7.00	7.00	8.00	8.00	8.00	8.00	6.00	6.00	6.00	6.00
	Մասնավոր հատվածին տրամադրվող վարկերը	9.66	9.36	9.82	9.82	10.00	10.00	10.00	7.68	6.52	6.52	6.52	10.00
	Տոկոսադրույքների կարգավորումները և/կամ բացասական իրական տոկոսադրույքները	9.00	9.00	9.00	9.00	9.00	9.00	9.00	9.00	9.00	9.00	10.00	9.00

բ	Աշխատուժի շուկայի կարգավորումը, այդ թվում՝	6.05	5.65	6. 20	6.12	7.62	6.89	7.31	7.31	6.51	5.65	6.31	6.89
	Աշխատանքի ընդունման դժվարությունը և նվազագույն աշխատավարձի ազդեցությունը	6.70	6.70	6.70	6.70	10.00	10.00	10.00	10.00	6.70	6.70	6.70	10.00
	Աշխատանքի ընդունման և աշխատանքից ազատման հեշտությունը	5.15	5.60	6.23	6.03	6.78	6.74	7.29	7.39	7.78	7.13	6.95	6.77
	Կոլեկտիվ համաձայնագրերը	7.64	7.61	7.46	7.19	8.31	8.05	7.94	7.84	7.60	7.38	7.25	7.59
	Ժամային կարգավորումները	8.00	8.00	8.00	8.00	8.00	8.00	8.00	8.00	8.00	8.00	8.00	8.00
	Աշխատանքից ազատման պարտադիր ծախքը	8.79	8.79	8.79	8.79	9.63	9.63	9.63	9.63	7.96	7.96	7.96	7.96
	Ձինվորական ծառայությունը, զորակոչը	0.00	0.00	0.00	0.00	3.00	3.00	1.00	1.00	1.00	1.00	1.00	1.00
գ	Գործարարության կարգավորումը, այդ թվում՝	4.71	4.86	5.16	5.25	6.40	7.03	7.27	7.46	4.74	4.82	6.07	6.21
	Գների հսկողությունը	5.00	5.00	5.00	5.00	8.00	8.00	8.00	8.00	--	--	--	--
	Վարչարարական պահանջները	3.04	3.27	3.59	3.73	4.74	5.18	6.03	6.39	3.96	4.21	5.33	3.29
	Բյուրոկրատիայի ծախքը	2.93	6.26	6.07	6.31	3.22	6.16	6.08	6.83	5.89	5.41	5.03	5.18
	Գործարարություն սկսելու հեշտությունը	9.36	9.36	9.38	9.49	9.36	9.55	9.86	9.87	8.27	8.97	9.65	9.65
	Ոչ պաշտոնական վճարները պետական պաշտոնյաներին	5.19	4.39	3.78	3.74	5.00	5.62	6.24	6.21	4.65	4.19	4.02	4.51
	Լիցենզավորման սահմանափակումներ	7.47	8.28	8.28	8.50	8.79	9.02	9.04	9.28	5.67	6.15	6.60	6.87
	Ձարկային պարտավորությունների կատարման ծախսերը	0.00	0.00	0.00	0.00	5.66	5.66	5.66	5.66	0.00	0.00	5.79	5.79
	Տնտեսական ազատության չճշգրտված ինդեքսը	**7.24**	**7.25**	**7.23**	**7.12**	**6.85**	**7.27**	**7.24**	**7.47**	**6.30**	**6.29**	**6.47**	**6.36**
	Երկրի դիրքը աշխարհի 141 երկրների շարքում՝ ըստ չճշգրտված ինդեքսի	**41**	**41**	**48**	**50**	**70**	**39**	**45**	**23**	**96**	**95**	**89**	**93**

«Տնտեսական ազատությունը աշխարհում. 2010 թ. ինդեքսը» նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում ըստ «Ֆրեյզեր» և «Կատո» ինստիտուտների գնահատականների

Աղյուսակ 2

Երկիր	Դիրքը 141 երկրների շարքում	Տնտեսական ազատության ընդհանուր ինդեքսի միավոր	Սեփականության իրավունքի պաշտպանվածության աստիճան	Կոռուպցիայի ցուցանիշ	«Վատ փող» լվանալու դեմ պայքարի ցուցանիշ	Միջազգային առևտրի ազատության ցուցանիշ	Կառավարության ծախսերի, հարկման և պետական սեփականության ցուցանիշ
Էստոնիա	12	7.73	6.79	7.21	9.08	7.95	7.62
Սլովակիա	16	7.60	6.57	6.24	9.48	8.05	7.65
Վրաստան	23	7.47	7.68	5.07	9.08	7.73	7.81
Հունգարիա	28	7.44	6.29	6.28	9.25	8.06	7.30
Լիտվա	33	7.34	7.00	6.58	8.81	7.46	6.85
Բուլղարիա	36	7.31	7.46	5.21	8.74	7.62	7.54
Չեխիա	46	7.19	5.02	6.43	9.14	7.84	7.53
Ալբանիա	48	7.18	8.24	5.30	9.40	6.29	6.67
Հայաստան	50	7.12	7.87	5.49	8.88	6.61	6.78
Լատվիա	55	7.08	5.10	6.59	8.90	7.32	7.49

Ղազախստան	58	7.06	6.83	6.03	8.48	6.51	7.48
Սլովենիա	61	6.94	5.20	6.02	9.42	7.25	6.81
Ղրղզստան	62	6.93	7.90	4.70	7.40	7.39	7.27
Մոնտենեգրո	66	6.90	5.84	5.94	7.91	7.19	7.61
Լեհաստան	66	6.90	5.59	5.94	9.21	7.05	6.72
Մակեդոնիա	72	6.83	6.88	5.08	7.56	6.75	7.88
Ռուսաստան	84	6.62	7.27	5.73	8.43	5.77	5.91
Ռումինիա	85	6.58	4.64	5.86	8.24	7.43	6.72
Խորվաթիա	87	6.51	5.32	5.65	8.09	6.55	6.91
Մոլդովա	87	6.51	5.87	6.38	7.22	6.82	6.26
Ադրբեջան	93	6.36	5.76	6.40	6.09	6.66	6.87
Սերբիա	97	6.31	6.40	4.74	7.34	6.68	6.40
Բոսնիա և Հերցեգովինա	111	6.03	5.56	3.51	7.98	6.17	6.93
Ուկրաինա	127	5.53	5.50	5.00	4.61	6.51	6.02

Նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների դիրքը ըստ տնտեսական ոլորտների՝ գնահատված «Ֆրեյզեր» և «Կատո» ինստիտուտների կողմից (2010 թ.)

Աղյուսակ 3

Երկիր	Դիրքը ըստ տնտեսական ազատության ամենի ինդեքսի (աշխարհի 141 երկրների շարքում)	Դիրքը ըստ ոլորտների					Դիրքը ըստ ենթաոլորտների		
		Անհատ ընտրության ազատություն	Ազատ առևտուր միջազգային փոխանակման մեջ	Ընդունելի «վնասի» չափանիշ	Անվտանգ դրամական միջավայր	Գործարարության կարգավորման ազատություն	Անձնական իրավունքների ապահովվածություն	Սեփականության իրավունքի պաշտպանվածություն	Ընդհանուր պետական ծախսեր
		1	2	3	4	5	(5-Ա)	(5-Բ)	(5-Գ)
Էստոնիա	12	55	25	39	13	30	1	93	11
Սլովակիա	16	63	50	17	10	27	1	28	103
Վրաստան	23	26	88	38	16	23	75	41	6
Հունգարիա	28	76	49	32	9	47	67	49	65
Լիտվա	33	47	39	48	32	73	42	91	87
Բուլղարիա	36	31	85	52	23	36	14	22	96
Չեխիա	46	124	43	35	15	37	32	25	91
Ալբանիա	48	8	83	26	99	86	86	86	58
Հայաստան	50	18	77	45	85	78	60	78	107
Լատվիա	55	121	38	44	42	38	45	46	55
Ղազախստան	58	52	54	57	90	39	14	58	62
Սլովենիա	61	118	55	23	47	75	55	97	63
Ղրղզստան	62	17	97	93	36	51	41	75	39
Մոնտենեգրո	66	96	60	74	50	31	13	20	101
Լեհաստան	66	105	62	33	61	81	69	65	119
Մակեդոնիա	72	50	87	88	75	19	46	19	32
Ռուսաստան	84	37	68	61	114	117	113	80	133
Ռումինիա	85	129	66	66	34	80	110	64	70
Խորվաթիա	87	113	72	69	88	68	29	69	114
Մոլդովա	87	94	45	97	69	104	81	114	99
Ադրբեջան	93	98	44	126	82	71	113	57	49
Սերբիա	97	70	94	94	81	97	74	88	122
Բոսնիա և Հերցեգովինա	111	107	126	72	103	66	65	62	110
Ուկրաինա	127	109	91	138	91	112	88	71	138

Նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների դիրքը աշխարհի 141 երկրների շարքում ըստ տնտեսական ոլորտների և հաջորդականության՝ գնահատված «Ֆրեյզեր» և «Կատո» ինստիտուտների կողմից (2010 թ.)

Աղյուսակ 4

Կառավարության չափը		Իրավական կառուցվածքը և սեփականության իրավունքի պաշտպանվածությունը		«Առողջ փողի» մատչելիությունը		Միջազգային առևտրի ազատությունը	
Ալբանիա	8	Էստոնիա	25	Սլովակիա	17	Հունգարիա	9
Ղազաստան	17	Լատվիա	38	Սլովենիա	23	Սլովակիա	10
Հայաստան	18	Լիտվա	39	Ալբանիա	26	Էստոնիա	13
Վրաստան	26	Չեխիա	43	Հունգարիա	32	Չեխիա	15
Բուլղարիա	31	Ադրբեջան	44	Լեհաստան	33	Վրաստան	16
Ռուսաստան	37	Մոլդովա	45	Չեխիա	35	Բուլղարիա	23
Լիտվա	47	Հունգարիա	49	Վրաստան	38	Լիտվա	32
Մակեդոնիա	50	Սլովակիա	50	Էստոնիա	39	Ռումինիա	34
Ղազախստան	52	Ղազախստան	54	Լատվիա	44	Ղրղզստան	36
Էստոնիա	55	Սլովենիա	55	Հայաստան	45	Լատվիա	42
Սլովակիա	63	Մոնտենեգրո	60	Լիտվա	48	Սլովենիա	47
Սերբիա	70	Լեհաստան	62	Բուլղարիա	52	Մոնտենեգրո	50
Հունգարիա	76	Ռումինիա	66	Ղազախստան	57	Լեհաստան	61
Մոլդովա	94	Ռուսաստան	68	Ռուսաստան	61	Մոլդովա	69
Մոնտենեգրո	96	Խորվաթիա	72	Ռումինիա	66	Մակեդոնիա	75
Ադրբեջան	98	Հայաստան	77	Խորվաթիա	69	Սերբիա	81
Լեհաստան	105	Ալբանիա	83	Բոսնիա և Հերցեգ.	72	Ադրբեջան	82
Բոսնիա և Հերցեգ.	107	Բուլղարիա	85	Մոնտենեգրո	74	Հայաստան	85
Ուկրաինա	109	Մակեդոնիա	87	Մակեդոնիա	88	Խորվաթիա	88
Խորվաթիա	113	Վրաստան	88	Ղրղզստան	93	Ղազախստան	90
Սլովենիա	118	Ուկրաինա	91	Սերբիա	94	Ուկրաինա	91
Լատվիա	121	Սերբիա	94	Մոլդովա	97	Ալբանիա	99
Չեխիա	124	Ղրղզստան	97	Ադրբեջան	126	Բոսնիա և Հերցեգ.	103
Ռումինիա	129	Բոսնիա և Հերցեգ.	126	Ուկրաինա	138	Ռուսաստան	114

Վարկային շուկայի, աշխատուժի և գործարարության կարգավորումը	
Մակեդոնիա	19
Վրաստան	23
Սլովակիա	27
Էստոնիա	30
Մոնտենեգրո	31
Բուլղարիա	36
Չեխիա	37
Լատվիա	38
Ղազախստան	39
Հունգարիա	47
Ղրղզստան	51
Բոսնիա և Հերցեգ.	66
Խորվաթիա	68
Ադրբեջան	71
Լիտվա	73
Սլովենիա	75
Հայաստան	78
Ռումինիա	80
Լեհաստան	81
Ալբանիա	86
Սերբիա	97
Մոլդովա	104
Ուկրաինա	112
Ռուսաստան	117

Վարկային շուկայի կարգավորումը	
Էստոնիա	1
Սլովակիա	1
Մոնտենեգրո	13
Բուլղարիա	14
Ղազախստան	14
Խորվաթիա	29
Չեխիա	32
Ղրղզստան	41
Լիտվա	42
Լատվիա	45
Մակեդոնիա	46
Սլովենիա	55
Հայաստան	60
Բոսնիա և Հերցեգ.	65
Հունգարիա	67
Լեհաստան	69
Սերբիա	74
Վրաստան	75
Մոլդովա	81
Ալբանիա	86
Ուկրաինա	88
Ռումինիա	110
Ռուսաստան	113
Ադրբեջան	113

Աշխատուժի շուկայի կարգավորումը	
Մակեդոնիա	19
Մոնտենեգրո	20
Բուլղարիա	22
Չեխիա	25
Սլովակիա	28
Վրաստան	41
Լատվիա	46
Հունգարիա	49
Ադրբեջան	57
Ղազախստան	58
Բոսնիա և Հերցեգ.	62
Ռումինիա	64
Լեհաստան	65
Խորվաթիա	69
Ուկրաինա	71
Ղրղզստան	75
Հայաստան	78
Ռուսաստան	80
Ալբանիա	86
Սերբիա	88
Լիտվա	91
Էստոնիա	93
Սլովենիա	97
Մոլդովա	114

Գործարարության կարգավորումը	
Վրաստան	6
Էստոնիա	11
Մակեդոնիա	32
Ղրղզստան	39
Ադրբեջան	49
Լատվիա	55
Ալբանիա	58
Ղազախստան	62
Սլովենիա	63
Հունգարիա	65
Ռումինիա	70
Լիտվա	87
Չեխիա	91
Բուլղարիա	96
Մոլդովա	99
Մոնտենեգրո	101
Սլովակիա	103
Հայաստան	107
Բոսնիա և Հերցեգ.	110
Խորվաթիա	114
Լեհաստան	119
Սերբիա	122
Ռուսաստան	133
Ուկրաինա	138